

ԱԶԳԱՅԻՆ

ԼՈՒՐԵՐ

ՌՈՒՍԱՀԱՅԲ՝

Բազում անցեալ յունուարի 31ին վախճանեցաւ Ներսէս Կրասիլնիկեանց վաճառականը. որ Մարդասիրական Ընկերութեան Հիմնադիր անդամներից մէկն էր. Հանգուցեալն անդաւակ էր. ուստի և նորա ժառանգ եղբարք ի յիշատակ նորա՝ բարեգործական նպատակով նուիրեցին 20,000 ռուբլի, որոյ 13,000 յանուն Մարդասիրական Ընկերութեան կառուցանելի դպրոցին. 4000 աղքատանոցի և 3000 Ս. Էջմիածնի նորոգութեան համար որոշուեցաւ:

Երևանի Ս. Գայիանեան Հայ օրիորդաց դպրոցի օգտին տուած պարահանգէսից գոյացել է մօտ 400 ռուբլի զուտ արդիւնք:

Բազուի Մարդասիրական Ընկերութեան հաշուից երևումէ, որ նա անցեալ 1887 թուականին ծախսել է զանազան բարեգործական նպատակների համար 12,078 ռ. 24 կոպ. իսկ առ մէկն յունուարի ներկայ ամի զրամագլուխ մնացել է 56909 ռ. 82 կոպ.

Թեւաւի Ս. Գեորգ մայր եկեղեցւոյ երէցփոխան Պ. Ե. Յ. Սիմէօնեանցը խնդրում է հրատարակել հետեւեալը.

Ներկայ տարուայ Յունուարի 1ին լրացաւ ուղիղ տասն և հինգ տարի, ինչ վարում եմ երէցփոխանի պաշտօն տեղիս Ս. Գեորգ մայր եկեղեցւոյ, Իմ գործունէութեան մանրամասն 14 տ. հաշիւները տպուած են անցեալ տարուայ «Նոր—Դար» ի № 35ի մէջ. ցանկացողները անկասկած կարող են տեղեկանալ. Այդ հաշիւներից պարզ կը տեսնի ընթերցողը, որ առ 1ն Յունուարի 1887 ամի մնացել է ինձ մօտ 1185 ռուբ. 28 կոպ. Բացի այս 1887 թուին եկեղեցին հո—դ է ունեցել. գլխաւորապէս մոմից, լուսադիններից, զրամագլխի տոկոսիքից և այլն 454 ռուբ. Ընդամենը եկեղեցին ունեցել է հո—դ առ 1ն Յունուարի 1888 ամի 1639 ռուբ. 82 կոպ. Եկեղեցին 1887 թ. ընթացքում ծախել է 400 ռուբ. 10 կոպ. Այս գումարից 120 ռ. վճարած է տեղիս Հայոց ուսումնարաններին, 120 ռուբ. ուղարկուած է Ս. Էջմիածնայ տաճարի նորոգութեան համար, իսկ մնացածը գործ է դրուել՝ եկեղեցու նորոգութեան, ժամկոչների ոռճկի վրայ և այլն:

Ծախքը դուրս գալով մուտքից մնում է առ 1ն Յունուարի 1888 ամի 1239 ռուբ. 72 կոպ. որից մի հազար ռուբլին շահեցողութեամբ գտնուում է Թիֆլիս Առևտրական բանկում, իսկ մնացեալ երկու հարիւր երեսուն և ինն ռուբլի եւթանասուն և երկու կոպ. (239 ռ. 72 կ.) գումարը գտնուումէ առ ձեռն ինձ մօտ:

ՏՆՃԿԱԼԱՅՔ՝

Արևելք լրագրի Յունուարի 22ի համարի մէջ կարդում ենք .

« Մայրաքաղաքիս և դաւառաց ոմանց մէջ կատարուած ձերբակալութեանց առթիւ Հայ ազգը ցաւ ի սիրտ կը դիտէր թէ իւր հաւատարմութիւն կանկածելի կը ցուցուի. Տէրութեան վստահութիւնն առանքն է, որոյ վրայ կը դառնան մեր ազգային դործեր, երբ այդ առանցք կը խանգարի, ազգային գործերն ալ բոլորովին անգոհացուցիչ վիճակի մը կը մտնուին. Բայց այդ վստահութեան Հայ Ազգն իրաւամբ արժանացած էր իւր բազմադիմի ծառայութեամբ առ Օսմանեան Գահն և իւր դարաւոր հաւատարմութեամբ ու բուն կասկածի ներքեւ դրուելը բնականապէս մշտով կը ընուր Ազգին սիրտը:

Վեհ. Սուլթանն, զոր հպատակաւոր հօգածութիւնն ամեն գովեստէ վեր է, Իւր Մեծ - Եպարքոսին միջոցաւ հրաւիրելով Ամեն. Ս. Պատրիարք Հայրն և Տէրութեան չորս երեւելի հայ պաշտօնատարները, վերահասու լինելէ յետոյ սոյն ապաւորութեան, բարեհաճեցաւ դատական նախարարութեան խորհրդական Վսեմ. Վահան Էֆէնտիի միջոցաւ ապահովութիւն շնորհել Ամեն. Ս. Պատրիարք Հօր թէ Իւր հաւատարիմ հպատակ հայ ազգին դարաւոր հաւատարմութեան վրայ Իւր վստահութիւն կատարեալ է:

Ն. Կ. Աւհափառութիւն յայտարարած է թէ, իբրեւ հայր հասարակաց, Ինք խտր չի դնէր Իւր հպատակաց մէջ. թէ իբրեւ գերագոյն հսկող հանրային ապահովութեան, կը պատժէ չարագործներ և խռովարարներ, բայց զանոնք պատժելով, չի հարցունէր թէ չարագործին անուշը Մէհմէտ է, թէ Գրիգոր, կամ Եանի. Անհատը միայն կրնկատէ և ո՛չ զԱզգն, և անհատից յանցանքը չի վերագրեր ըովանդակ Ազգին, Հետեւապէս, թէ և քանի մը Հայեր ձերբակալուած լինին, Իւր Կայսերական վստահութիւն կատարեալ է Հայ ազգին հաւատարմութեան վրայ. Այդ վստահութեան շնորհիւ է որ բարձր պաշտօններու մէջ կը գործածէ Հայազգիներ, և Իւր անձնական գործոց և Իւր անձնական Գանձուն տնօրինութիւնն ևս յանձնած է Հայազգւոյ մը, Վսեմ. Յակոբ փաշային, Եւ իբրեւ նոր ապացոյց Իւր վստահութեան, կը բարեհաճի հրաման ընել որ Հայոց Պատրիարքն և Պատրիարքարանի Ժողովները սրտի կատարեալ հանգարտութեամբ շարունակեն իրենց պաշտօն, և Իւր Կայսերական հաւատիքն հաղորդեն Հայ Ազգին: »

Նոր Դարի թղթակիցն աւելացնումէ և այն, որ « Նահանգաց Կուսակալներն ևս յատուկ հրամաններ ուղարկուած են, որպէս զի ինչպէս ամեն հպատակաց, նոյնն էլ Հայ ազգի գործերը շուտով և արդարութեամբ լուծուին, միշտ ազգի շահն ի նկատի ունենալով: »

Արևելքում կարդում ենք.

« Մեր Օգոստափառ Աւհապետն Իւր կրթապետական և մարդասիրական փափուկ զգացմանց մէկ նոր ապացոյց ևս հաճեցաւ տալ. Ն. Կ. Աւհափառութիւն բարեհաճեցաւ շնորհել Իւր Օգոստափառ հովանաւորութիւն այն պարահանդէսին, որ ինչպէս ամեն տարի, նա տեղի պիտի ունենայ Օսմանեան

Վայսերական Պանդայի տնօրէն Դ. Պօսթըրի նախագահութեամբ կողմուած մամուլախումբի մը հսկողութեան ներքեւ ի նպաստ այն աղքատ Հայ վարժաւորանայ, զորս կրինամեն Միացեալ ընկերութիւնը Հայոց, Այս կրթական և Մարգարական գործքին իւր կողմէ նիւթական նպաստ մը ևս ընելով ն. Կ. Վ. բարեհաճեցաւ 150 Օսմանեան ոսկի շնորհել:

— Բերկրութեամբ կը ծանուցանեմք թէ Պետական խորհրդոյ օրէնսդիր Ճիւղն, որ բաւական ժամանակէ ի վեր կը զբաղուէր Ձուլիչ Յիգրանի Ժառանգաւորաց դատին առթիւ ծագած ամուսնական—ժառանգական խնդրոյն քննութեամբ, այս օրերս Վսեմադատիւ Խալիս Պէի նախագահութեամբ գումարուած մէկ նստի մէջ, միաձայնութեամբ ի նպաստ Պատրիարքարանի պահանջման որոշում տուած է, ազգային բաղձանաց համեմատ լուծում մը տալով ազգային եկեղեցական առանձնաշնորհմանց վերաբերեալ կարեւորագոյն խնդրոյ մը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ.

Ազգիս Վեհափառ Հայրապետը՝ Փետրուարի 10ին Ք 67՝ հաստատեց իւր սրբատառ Կոնդակաւն՝ Բարեկրօն Պետրոս քահանայ Սարգսեանին և պատուելիք՝ երեցփոխ Միքայէլ Գուլումեանցին և Վահան Գրիգորեանին՝ Փիւ գիւղի Ս. Ստեփաննոս եկեղեցւոյ եկեղեցական—ծխական տղայոց միգրատեան ուսումնարանի հոգաբարձական պաշտօնի մէջ:

Ազգիս Վեհափառ Հայրապետը Փետր. 10 Ք 68 հաստատեց իւր սրբատառ Կոնդակաւն՝ Բարեկրօն Պօղոս քահանայ Եպիսկոպոսեանցին և Պատուելիք՝ երեցփոխ Պօղոս Կարապետեանին և բժիշկ Եագոր Գրիգորեան Յովհաննիսեանցին՝ Բանանց գիւղի եկեղեցական—ծխական տղայոց միգրատեան ուսումնարանի հոգաբարձական պաշտօնի մէջ:

19 Յունուարի. Բագուայ Բարեկ. գործակալն ուղարկել է յօգուտ Ճեմարանի Պ, Խաչատուր Կիրինեանցից ստացուած նուէր՝ 10 բուլլի:

22 Յունուար. Երեանցի հանգուցեալ Մկրտիչ Խաչատրեան Սանահեանց թողել է կտակ, որով իւր հինգ քարեայ գրպակները, հանդերձ ներքնատափը, արքունական փողոցի վրայ, թողնում է քաղաքի Հայոց Սուրբ Աստուածածին Եկեղեցուն, խնդրելով հոգահանգիստ կառարել իւր և իւրայնոց համար տարին երկու անգամ, իւր մարմինը թաղել Ս. Աստուածածնի բակում և կրպակների վարձադրամից մասն հանել մի սան և մի սանուհի պահելու համար Երեանի Հայոց դպրոցներում:

22 Յունուարի. Ղարաբաղի թեմի Կուսապատ գիւղի Խաչատուր քահանայ Տէր Եղիազարեանցը, գործած ծանր յանցանքների համար, պատժուում է